ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Հիմնախնդիր

Մեզանում ձևավորվել է մի իրավիճակ, երբ համայնքների տնտեսական ու սոցիալական զարգացումը գրեթե լիովին կախված է կառավարության կողմից տրամադրվող դոտացիաներից, սուբսիդիաներից ու սուբվենցիաներից:

Նման իրողությունը, բնականաբար, չի նպաստում համայնքների ինքնակառավարման ու ինքնաբավության կարողությունների զարգացմանը: Ավելին, նման պայմանները էապես խոչնդոտում են համայնքային նախաձեռնությունների, մասնավորապես՝ ներդրումային նախագծերի իրականացումը:

«ՀՀ ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների /ներդրումների” (INDC) ֆինանսական մեխանիզմի ներդրում միջին եվ փոքր քաղաքային եվ գյուղական համայնքներում» ծրագիրը միտված է փոխելու իրավիճակը բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման, միաժամանակ բնապահպանական խնդիրների բացահայտման ու լուծման գործընթացի մեջ համայնքների ու բնակավայրերի բնակչությանը անմիջապես ներգրավելու միջոցով:

Գաղափար

Ծրագրի հիմքում համայնքի բնակիչներին անօտարելի իրավունքով պատկանող կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային («կանաչ») հիմնադրամի ձևավորման գաղափարն է:

Հիմնադրամի դրամագլուխը պետք է բաղկացած լինի երկու բաղադրիչից՝

ա/ սույն ծրագրի, դոնորների ու այլ աղբյուրների տրամադրած ներդրումային միջոցներից

և բ/ ապագայում համայնքին տրամադրվող մշտատև ու կայուն՝ ամենամյա բնապահպանական սուբվենցիաներից:

Նպատակ

Ծրագրի նպատակն է օժանդակել համայնքների բնակիչների ու քաղհասարակության ներգրավմանը բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման, բնապահպանական խնդիրների բացահայտման ու լուծման գործընթացներում:

Խնդիր

Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի ձևավորման գործընթացում կարևորագույն խնդիր է բնակչության իրական և գործուն ներգրավվածությունը, ինչն իր հերթին ենթադրում է համայնքի բնակիչների ինքնակազմակերպման կարողության բավարար մակարդակ:

Բնակչության ինքնակազմակերպման առաջնային օղակը համայնքն է, իսկ համայնքների խոշորացման դեպքում՝

բնակավայրը: Ուստի, նպատակահարմար ենք գտնում կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի ձևավորման գործընթացը սկսել Հայաստանի միջին և փոքր քաղաքային ու գյուղական համայնքներից ու բնակավայրերից:

Գործողություն

Հրավիրում ենք համայնքների ու բնակավայրերի բնակչությանը ընդգրկվել ծրագրում, նախաձեռնել կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամների ստեղծումը և մասնակցել համայնքային ներդրումային նախագծերի իրականացմանը:

Նորարարական բնույթի այս ծրագրի բովանդակային և ֆինանսական սխեմայի մասին պատկերացում կազմելու համար առաջարկում ենք դիտել սույն ՓԴԾ նախագծի շրջանակում պատրաստած տեսաֆիլմը հետևյալ հղումով.

https://www.youtube.com/watch?v=wY4ct3Z5wp0&feature=youtu.be

Սպասում ենք արձագանքի

Նախագծի մասին համառոտ տեղեկությունը տեղակայված է նաև հետևյալ կայքէջերում *http://www.sgp.am/am/Projects?id=79*

https://khazer.org/hy/hh-inds/

Ծրագրում ընդգրկվելու համար դիմե՛ք.

«ԽԱԶԵՐ» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպություն

Հեռ.՝ 534 652; 093 73 72 79; 091 24 00 81

Էլ.փոստ՝ info@khazer.org

Կայք՝ www.khazer.org

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ